Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-904-11.05.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածում.

1. 2-րդ և 2.1-ին մասերը «շնորհում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում զրկում» բառերով.

2. 3-րդ մասում «քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության» բառերը փոխարինել «համայնքային ծառայության համապատասխան կամ» բառերով.

3. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Քաղաքացիական ծառայության դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակման հետ միաժամանակ շնորհվում է նրա քաղաքացիական ծառայության դասային աստիճանին համապատասխան համայնքային ծառայության դասային աստիճան, եթե նրա ունեցած քաղաքացիական ծառայության դասային աստիճանը ցածր չէ տվյալ պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճանից, իսկ տվյալ պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճանից ցածր քաղաքացիական ծառայության դասային աստիճան ունենալու դեպքում՝ համայնքային ծառայության տվյալ պաշտոնին համապատասխան համայնքային ծառայության դասային աստիճան: Քաղաքացիական ծառայության 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակման հետ միաժամանակ շնորհվում է համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:» .

4. 7-րդ մասում «և «ժէ» կետերով» բառերը փոխարինել «,«ժզ» և «ժթ» կետերով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «ա» կետը «մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերից հետո լրացնել «կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ» բառերով.

2. 2-րդ մասի 1-ին պարբերության «պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում» բառերը փոխարինել «պետական կամ համայնքային կառավարման ոլորտի» բառերով.

3. 2-րդ մասի 2-րդ պարբերությունը «ներկայացվող» բառից հետո լրացնել «բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի և փորձի» բառերով.

4. 3-րդ մասը «վերապատրաստումից հետո» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետի ավարտով պայմանավորված՝ 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի փոփոխման դեպքի:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում «75» թիվը փոխարինել «85» թվով:

Հոդված 4. Օրենքի 14.1. հոդվածում.

1. 2-րդ մասում «հոդվածով» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ այդ պաշտոնը կարող է արտամրցութային կարգով զբաղեցնել համայնքային ծառայության կադրերի ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձը:»:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի 1-ին պարբերությունը «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 2.1.-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1. մասով.

«2.1. Քաղաքացիական ծառայության դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնում առաջին անգամ նշանակման դեպքում փորձաշրջան չի սահմանվում:»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքային ծառայողների վերապատրաստումն անցկացնում են օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունները:»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում.

1. «ա» կետը «համայնքի ղեկավարի» բառերից հետո լրացնել «, Երևանի վարչական շրջանի ղեկավարի, նրա տեղակալի (տեղակալների)» բառերով.

2. մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ» և «դ» կետերով.

«գ) համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձինք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով թեստավորում, ինչպես նաև թեստավորման հարցաշարերի շրջանակներում հարցազրույց անցնելուց հետո.

դ) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված անձի համեմատությամբ դրական բալերի հավասար հանրագումար հավաքած, սակայն մրցույթի թեստային փուլի արդյունքներով հաղթող չճանաչված անձինք:»:

Հոդված 8. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ը» կետով.

«ը) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ»:

Հոդված 9. Օրենքի 27-րդ հոդվածում.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված համայնքային ծառայողների:»:

2. Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Պետության պատվիրակած լիազորություններ իրականացնող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով որոշվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների շրջանակներում:»:

Հոդված 10. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ի» կետով.

«ի) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան տրված համաձայնության ժամկետի ավարտից հետո պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին չհամապատասխանելը».

Հոդված 11. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում «համայնքի ղեկավարի որոշմամբ» բառերը փոխարինել «համայնքային ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընդունված իրավական ակտով» բառերով:

Հոդված 12. Օրենքի 45-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր պարբերությամբ.

«Համայնքային ծառայողների հեթական վերապատրաստման անցկացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով համապատասխան միջոցներ նախատեսված լինելու դեպքում:»:

Հոդված 13. Անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարված փոփոխությունների

NN	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասում «,«ժզ» և «ժթ» կետերով» բառերը փոխարինել «,«ժզ» և «ժթ» կետերով» բառերով, քանի որ դասային աստիճանից պետք է զրկվեն դատական կարգով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված, այլ ոչ թե համապատասխան հիվանդություններից որևէ մեկով հիվանդացած անձինք:	Ընդունվել է: Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասը լրամշակվել է:
2.	ՀՀ կառավարություն	Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության «պետական կառավարման ոլորտի կամ համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում» բառերը «պետական կամ համայնքային կառավարման ոլորտի» բառերով, քանի որ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար հավասարապես կարևորվում է ինչպես պետական կառավարման ոլորտի, այնպես էլ համայնքային կառավարման ոլորտի ստաժը, որն իր մեջ ներառում է նաև համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավար պաշտոններում աշխատանքային ստաժը:	Ընդունվել է: Օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրամշակվել է:
3.	ՀՀ կառավարություն	Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի 2.1.-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով: Առաջարկությունը պայմանավորված է օրենքի նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող լրացմամբ:	Ընդունվել է: Օրենքի նախագծի 5-րդ հոդվածը լրամշակվել է:

4.	ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսել, որ համայնքային ծառայողների վերապատրաստումը պետք է անցկացնեն օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունները:	Ընդունվել է: Օրենքի նախագծի 6-րդ հոդվածը «սահմանված կարգով» բառերից առաջ լրացվել է «օրենքով» բառով:
5.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ» կետով. «դ) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված անձի համեմատությամբ դրական բալերի հավասար հանրագումար հավաքած, սակայն մրցույթի թեստային փուլի արդյունքներով հաղթող չճանաչված անձինք:»: Առաջարկությունը նպատակաուղղված է համայնքային ծառայության կադրերի ռեզերվի կայացմանը:	Ընդունվել է: Օրենքի նախագծի 7-րդ հոդվածը լրամշակվել է:
6.	ՀՀ կառավարություն	Պետության պատվիրակած լիազորություններ իրականացնող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը պետք է որոշվեն պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների շրջանակում:	Ընդունվել է: Օրենքի նախագիծը լրացվել է նոր 9-րդ հոդվածով:
7.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է օրենքով հստակ սահմանել, որ համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման անցկացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով համապատասխան միջոցներ նախատեսված լինելու դեպքում:	Ընդունվել է: Օրենքի նախագիծը լրացվել է նոր 12-րդ հոդվածով: